

ՏԵՂԵԿԱՆՔ

<< Ազգային ժողովի կանոնակարգ >> ՀՀ սահմանադրական Օրենքում փոփոխվող հոդվածները

Հոդված 4. Պատգամավորի պարտականությունները

1. Պատգամավորը պարտավոր է՝
 - 1) ընդգրկվել մեկ մշտական հանձնաժողովի կազմում, բացառությամբ Կանոնակարգի 11-րդ հոդվածի 6.2-րդ և 7-րդ մասով նախատեսված դեպքերի.
 - 2) մասնակցել Ազգային ժողովի, ինչպես նաև իր անդամակցած հանձնաժողովի և աշխատանքային խմբի նիստերին.
 - 3) մասնակցել իր անդամակցած հանձնաժողովի հրավիրած խորհրդարանական լսումներին.
 - 4) պահպանել պատգամավորական էթիկայի կանոնները.
 - 5) ապահովել պատգամավորական մանդատի անհամատեղելիության պահանջների կատարումը.
 - 6) կազմակերպել քաղաքացիների ընդունելություն, ինչպես նաև իր լիազորությունների շրջանակում օրենքով սահմանված կարգով պատասխանել քաղաքացիների գրավոր առաջարկներին.
 - 7) պահպանել Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները:

Հոդված 11. Մշտական հանձնաժողովների կազմավորումը

1. Մշտական հանձնաժողովի կազմը և դրանում փոփոխությունները հաստատում է Ազգային ժողովինախագահը, եթե պահպանված են սույն հոդվածով սահմանված սկզբունքները:
2. Մշտական հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:
3. Խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում, ինչպես նաև հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ:
4. Եթե սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված համամասնությունը չի խախտվում, ապա խմբակցությունից դուրս եկած կամ հեռացված պատգամավորը կարող է՝
 - 1) մնալ նույն հանձնաժողովում, եթե այդ խմբակցությունը նրա տեղում խմբակցության անդամի չի նշանակում, կամ հանձնաժողովում առկա է այլ թափուր տեղ, կամ
 - 2) Ազգային ժողովի նախագահին ուղղված իր գրավոր դիմումով ընդգրկվել այլ հանձնաժողովում առկա թափուր տեղում:
5. Խմբակցությունն իրավունք ունի թափուր թողնելու հանձնաժողովում իրեն վերապահված տեղը, ինչպես նաև փոխելու հանձնաժողովի կազմում ընդգրկված իր անդամին:
6. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝
 - 1) նրա պատգամավորական լիազորությունները դադարում կամ դադարեցվում են.
 - 2) նա դուրս է գալիս հանձնաժողովից.
 - 3) նա դուրս է գալիս կամ հեռացվում է խմբակցությունից, եթե այդ խմբակցությունը նրա տեղում նշանակում է խմբակցության անդամի:

6.1. Խմբակցությունը յուրաքանչյուր հանձնաժողովում ունի առնվազն մեկ պատգամավոր ներկայացնելու իրավունք:

6.2. Եթե խմբակցության անդամների ընդհանուր թիվը փոքր է մշտական հանձնաժողովների ընդհանուր թվից, ապա խմբակցությունն իրավունք ունի իր անդամին

ներկայացնելու մեկից ավելի մշտական հանձնաժողովների կազմում ընդգրկվելու համար:
Այդ դեպքում խմբակցությունը յուրաքանչյուր մշտական հանձնաժողովում կարող է
ունենալ ոչ ավելի, քան մեկ պատգամավոր, իսկ նույն պատգամավորը կարող է լինել ոչ
ավելի, քան երեք մշտական հանձնաժողովի անդամ::

7. Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալները, ինչպես նաև
խմբակցությունների ղեկավարները կարող են չընդգրկվել հանձնաժողովի կազմում: